ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ,ԻՐԱՎՈՒՆՔԻ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՍԵՐՎԻՍ

(Ուսումնական առարկայի անվանումը)

Մասնագիտություն/ուղղություն ՍԵՐՎԻՍ դասիչ 101801.01.6

Որակավորումը բակալավր

Ֆակուլտետ Հասարակական գիտությունների

Ուսուցման ձև առկա 6-րդ կիսամյակ - 2 շաբաթ (2 կրեդիտ)

Հաստատված է ամբիոնի նիստում

(արձ. թիվ 7. 25.01. 2024 թ.)

Ամբիոնի վարիչ՝ Կ. Հարությունյան

Հաստատված է Հասարակական գիտությունների ֆակուլտետի

գիտական խորհրդի նիստում

(արձ. N 9 25.01. 2024 թ.)

Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկան՝ Հ. Պապոյան

Կազմող՝ ա.գ.թ. դոցենտ՝ Ռ. Հարությունյան

Վանաձոր 2024 թ.

Սերվիս մասնագիտության երրորդ կուրսի (վեցերորդ կիսամյակ) ուսումնական պրակտիկայի ծրագիր

1. Պրակտիկայի նպատակը

Ուսանողներին հնարավորություն ընձեռել ակադեմիական ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները *կիրառել* գործնականում՝ձեռք բերելով այն կարողություններն և հմտությունները, որոնք ներկայացվում են սերվիսի ոլորտի մասնագետին: Սերվիս մասնագիտության համար ուսումնական պրակտիկայի *նպատակն է* ուսանողներին հնարավորություն ընձեռել հավաքագրել, դասակարգել, վերլուծել, համադրել և գնահատել պրակտիկայի օբյեկտներին վերաբերվող մասնագիտական տեղեկատվությունը, կատարել խմբային, անհատական, կազմակերպչական աշխատանքներ և ընդլայնել ու զարգացնել մասնագիտական աշխարհայացքը, հմտություններն ու կարողությունները:

Խնդիրները: Ուսումնական պրակտիկայի խնդիրներն են՝ ուսանողներին հնարավորություն ընձեռել ուսումնասիրել և բացահայտել ինչպես սերվիսային կազմակերպությունների սպասարկման համակարգը, կատարած գործառույթները, այնպես էլ պատմամշակութային և բնական օբյեկտների սերվիսային և զբոսաշրջային դերն ու նշանակությունը:

Կրթական վերջնարդյունքները: Ուսումնական պրակտիկայի հիմնական նպատակը *ճանաչողական* գործառույթի ապահովումն է: Ուսանողներին հնարավորություն է տրվում *ճանաչել* մասնագիտական ոլորտի օբյեկտները և դրանցում տեղի ունեցող գործընթացները՝ առանց ուսանողների ամիջական մասնակցության: Այդ նպատակով անհրաժեշտ է, որ ուսանողները տարաբնույթ առաջադրանքների օգնությամբ հնարավորություն ունենան *ուսումնասիրել* պրակտիկայի օբյեկտների ներքին և արտաքին միջավայրերը՝ օբյեկտը *բազմակողմանիորեն ճանաչելու սկզբունքով*: Ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողները հնարավորություն ունեն *ստուգել* սեփական գիտելիքները: Նրանք՝ դիտորդի կարգավիճակով, հնարավորություն ունեն *բացահայտել* սպասարկման ոլորտի աշխատակիցներին անհրաժեշտ պրակտիկ հմտություններն ու կարողությունները: Ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողներին հնարավորություն է ընձեռում *կատարել* նաև ինքնուրույն աշխատանքներ և խմբային առաջադրանքներ: Վերջինս ուսանողների մոտ ձևավորում է *թիմային աշխատանք կատարելու* հմտություններ, որի շնորհիվ զարգանում են ուսանողների հատկապես *մասնագիտական շփման* հմտությունները: Պրակտիկան *օգնում է* ուսանողներին մասնագիտական աշխատանք գտնելու գործընթացում:

Ընդհանուր առմամբ՝ սերվիս մասնագիտության ուսումնական պրակտիկան *նպաստում է* ՀՀ-ում սպասարկման ոլորտի, մշակույթի, պատմության, աշխարհագրության ավելի խորը ճանաչմանը:

Պրակտիկայի անցկացման կազմակերպչական փուլը

Կազմակերպչական փուլում, համաձայն նախօրոք մշակված ժամանակացույցի, կազմակերպվում է բուն պրակտիկան: Փուլը յուրօրինակ ցուցիչ է պրակտիկայի ճիշտ պլանավորման ու կազմակերպման ընթացիկ գնահատման համար: Իրագործման փուլի ժամանակ իրականացվում է այցելություն պրակտիկաների օբյեկտներ և կատարվում են պրակտիկայի նպատակներից բխող մասնագիտական աշխատանքներ: Նշանակվում են պրակտիկայի ընթացիկ արդյունքների ամփոփման և առաջացած խնդիրների քննարկման օրեր:

Այս փուլի ժամանակ անհրաժեշտ է կատարել կազմակերպչական հետևյալ քայլերը .

Ակնարկային դասախոսություն: Ուսանողների ներկայությունը ստուգելուց հետո ղեկավարը ներկայացնում է տվյալ օրվա պրակտիկայի նպատակը, պրակտիկայի օբյեկտը՝ ընդհանուր բացատրություններ տալով դրա արտաքին և ներքին միջավայրերի, ստեղծման պատմության, աշխարհագրության և մասնագիտական այլ հարցերի մասին: Բացատրությունն ավարտելուց հետո ղեկավարը ներկայացնում է ուսանողների կողմից կատարվելիք մասնագիտական աշխատանքները:

Գործնական աշխատանքների կատարում: Ուսանողներն ըստ նախատեսված մասնագիտական նպատակային առաջադրանքների սկսում են ինքնուրույն ուսումնասիրել պրակտիկայի օբյեկտի արտաքին և ներքին միջավայրերը՝ էմպիրիկ մեթոդների (հիմնականում նկարագրություն, դիտարկում, սոցհարցում) օգնությամբ հավաքելով փաստական տվյալներ: Վերջինս ուղեկցվում է ղեկավարների և տվյալ սերվիսային կազմակերպության ներկայացուցչի վերահսկողությամբ և բացատրություններով:

Տվյալ օրվա համար նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո ղեկավարն ամփոփում է կատարված աշխատանքները, ներկայացնում սեփական դիտարկումները, կատարում ուղղորդիչ հարցադրումներ, բացատրություններ տալիս կատարված աշխատանքների վերաբերյալ և հիշեցնում հաջորդ օրվա անելիքները:

Երթուղիների մասը պետք է ներկայացնել ըստ հետևյալ կառուցվածքի.

- Օր/ամիս/տարի:
- Երթուղու անվանումը:
- Երթուղու նպատակը:
- Երթուղու և պրակտիկայի հիմնական օբյեկտի համառոտ նկա- րագրությունը՝ աշխարհագրական դիրքը, ստեղծման պատմու- թյունը (միայն պրակտիկայի հիմնական օբյեկտի համար):
- Պրակտիկայի օբյեկտի գնահատականը սոցիալ-մշակութային ծառայությունների և զբոսաշրջային տեսանկյունից (ներկայաց- նել երթուղու վրա եղած տարածքների և պրակտիկայի հիմնա- կան օբյեկտի սոցիալ-մշակութային ծառայությունների

կառուց- վածքը, զբոսաշրջային գրավչությունը և առանձնահատկու- թյունները, հիմնախնդիրները):

- Կատարել կանգառի՝ պրակտիկայի օբյեկտի, SWOT վերլուծու- թյուն մատրիցայի տեսքով:
- Ամփոփում (եզրակացություններ, առաջարկություններ՝ հաշվի առնելով պրակտիկայի ընթացքում ստացված ինֆորմացիան):

Յուրաքանչյուր օրը (երթուղին) պետք է ներկայացնել առանձին ըստ նշված կետերի: Յուրաքանչյուր երթուղի բաղկացած է կանգառներից, ուստի ըստ այցելության հերթականության գրվում է՝ Կանգառ 1 ...օբյեկտի անվանումը..., Կանգառ 2. ..օբյեկտի անվանու- մը... և այլն և հետո օբյետները ներկայացվում են ըստ նշված կետերի:

զ) ***Վերջաբանը*** շարադրվում է ըստ հետևյալ պահանջների.

Ներկայացնել պրակտիկայի օբյեկտների ընդհանրական և համե- մատական (հնարավորության դեպքում երթուղիների համեմատական գնահատական՝ բենչմարքինգ) վերլուծությունը՝ շեշտադրելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Անհրաժեշտ է հստակորեն ներկայացնել այցելած յուրաքանչյուր պրակտիկայի օբյեկտի և երթուղու ընդհանուր գծերն ու տարբերու- թյունները՝ զբոսաշրջային և սոցիալ- մշակութային ծառայությունների շրջանակում:

Կատարել առաջարկություններ ուսումնասիրված օբյեկտների ծա- ռայությունների համակարգում առկա խնդիրների լուծման կամ բարե- լավման համար:

է) ***Օգտագործված աղբյուրներում*** պետք է նշել հաշվետվության մեջ պրակտիկայի օբյեկտների մասին ներկայացվող տեղեկատվու- թյան աղբյուրները (ինտերնետային կայքեր, գրքեր, ամսագրեր, բուկ- լետներ ևն)

Մասնագիտական պրակտիկայի հաստատությունը, վայրը

Մասնագիտական պրակտիկա 6-րդ կիսամյակ (3-րդ կուրս)

60 ժամ/10 օր

Ղեկավար՝ ա.գ.թ., դոցենտ Գ Թադևոսյան

Պրակտիկայի փուլը	Կատարվող աշխատանքների համառոտ նկարագիրը	Անցկացման վայրը	Տևողությունը	Մեկնելու օրը
I Նախապատրաստական փուլ	Ուսանողներին ներկայացնել պրակտիկայի ընթացքում կատարվելիք աշխատանքները, նրանց պարտականությունները, անվտանգության կանոնները:	ՎՊՀ	-	
II Դաշտային փուլ 1.	Hiking երթուղու կազմման հետ ծանոթացում, երթուղու կազմում, դաշտային նյութի հավաքագրում, քարտեզագրում:	Ք. Դիլիջան-Բլդանի ձոր (Միջնադարյան եկեղեցիների երթուղի)	1օր	
2.	Հյուրանոցային գործի և կազմակերպման տեխնոլոգիաների հետ ծանոթացում	գ. Դսեղ	1օր	
3.	Էկոտուրի ամբողջական փաթեթի կազմում: Աշխատանք երթուղու մշակման, քարտեզագրման և օբյեկտների անձնագրերի կազմման վրա	1.Ք. Ստեփանավան – գ. Ուրասար-Զրաշուշանների լիճ 2.Գ.Կուրթան-Հնեվանք-Արևածագի ձոր 3. Ք. Ստեփանավան-գ. Վարդաղբյուր-Զգրաշեն	4 օր	
4.	Քաղաքային տուրի կազմում: Էքսկուրսավարական թղթապանակի փաստաթղթային հիմքի կազմում:	Ք.Ստեփանավան-Լոռիբերդ-Զորագետի Կանիոն	2 օր	
5.	Hiking երթուղու կազմման վրա աշխատանքներ ԲՀՊՏ-ներում	Գ. Գյուլագարակ-Տորմակ գետի հովիտ-լ. Կլորիկ	2օր	
III Ամփոփում	Օրագրերի լրացում	ՎՊՀ	-	

Պրակտիկայի գնահատումը

Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորը	Գնահատում
1. **հաճախելիություն**	0-10	
2. **սպասարկման համակարգի ճանաչում**	0-20	
3. **մասնագիտական հմտություններ** ▪ Սերվիսի(ծառայությունների և զբոսաշրջության) ոլորտի աշխատանքներին ակտիվ ներգրավվում ▪ Ծառայությունների և զբոսաշրջության կազմակերպման ռազմավարական պլանների մշակում ▪ Տեսական գիտելիքների և գործնական ունակությունների ներկայացում	 0-5 0-5 0-5	
4. **մասնագիտական աշխատանք** ▪ Մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների կայացման կարողություն ▪ Այլ անձանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու ունակություն ▪ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման հմտություն	 0-5 0-5 0-5	
5. **ստեղծագործական աշխատանք** ▪ Սպասարկման ծառայությունների վերաբերյալ նոր մեթոդների կիրառում ▪ Տարաբնույթ մշակութային միջավայրերում աշխատելու ունակություն ▪ Աշխատանքային ռեսուրսների կառավարման աշխատանքներին մասնակցություն ▪ Սպասարկման և զբոսաշրջության ոլորտներում ինքնուրույն ստեղծագործական գործունեության իրականացում	 0-5 0-5 0-5 0-5	
Պաշտպանություն	0-20	
Ընդհանուր միավոր	100	

Կոմպետենցիաների ցանկ,
որոնք «Սերվիսե մասնագիտությամբ սերվիսի բակալավրի որակավորում ունեցող ուսանողը ձեռք կբերի արտադրական պրակտիկայի արդյունքում՝ սահմանված 101801.01.6 «Սերվիսե ԿԾ-ով

ա)Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,

ԳԿ2 կազմակերպելու և պլանավորելու ունակություն,

ԳԿ6 երկրորդ օտար լեզվի իմացություն,

ԳԿ7 տարրական համակարգչային գիտելիքներ,

ԳԿ8 տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն).

բ)Միջանձնային կոմպետենցիաներ (ՄԶԿ)

ՄԶԿ6 բազմաձևության և բազմամշակութայնության ընդունում,

ՄԶԿ7 միջազգային միջավայրում աշխատելու ունակություն.

գ)Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու ունակություն,

ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություն,

ՀԳԿ7 այլ երկրների մշակույթների և սովորույթների իմացություն,

ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,

ՀԳԿ9 նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն.

դ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

ԱԿ-6 ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը, կատարել համապատասխան վերլուծություններ, իրականացնել գիտական կանխատեսումներ և եզրահանգումներ,

ԱԿ7 ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի գնահատման ունակություն,

ԱԿ11 տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու ունակություն: